

«ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՎԱՍՆ ՄԱՆԿԱՆՆ ԵՒ ԱՂՋԿԱՆՆ» ԶՐՈՒՅՑԻ ՀԱՅԿԱԿԱՆ
ՊԱՏՈՒՄԸ ԵՎ ՆՐԱ ԱՅԼԱԼԵԶՈՒ ԶՈՒԳԱՀԵՌԵՆԵՐԸ

(Հայերեն թարգմանության բնագրի հաւցի շուրջ)

Հ. Ն. ՄԿՐՏՅԱՆ

«Պատմութիւն վասն մանկանն եւ աղջկանն» գրույցը մեկն է միջնադարյան Հայաստանում մեծ տարածում գտած թարգմանական հուշարձաններից: Դարեհար լինելով հայ ընթերցողի «սեղանի գրքերից» մեկը, այն մեզ է հասել հինգ տասնյակից ավելի ձեռագիր ընդօրինակութիւններով, (XIV—XIX դդ. գրչութեամբ)¹ և XVIII—XX դդ. մոտ մեկուկես տասնյակ հրատարակութիւններով, ընդ որում որոշ ձեռագրեր վերաբերում են այն ժամանակաշրջանին, երբ արդեն գոյութիւն ունեին մի քանի հրատարակութիւններ²:

Զրույցի ուսումնասիրությամբ զբաղվել են տարբեր հետազոտողներ³, սակայն նրա հետ կապված մի շարք հարցեր մնում են դեռևս չլուծված, այդ թվում և հայերեն թարգմանության բնագրի հարցը:

Ն. Անդրիկյանին է պատկանում առաջին ենթագրութիւնն այն մասին, որ թարգմանութեանն արված է արաբերենից⁴: Սակայն զրույցի արաբա-

¹ Ձեռագրերից երեսուներեքը գտնվում են Մաշտոցի անվան Մատենադարանում, մնացյալները ուփոված են ողջ աշխարհում: F. Macler, Catalogue des manuscrits arméniens et géorgiens de la Bibliothèque Nationale. Paris, 1908, p. 27, № 57, p. 148 № 286, ff. 101—121, p. 154, № 308, ff. 93—105, p. 160, № 309, ff. 258—277. Ն. Ա. Կ. Ն. յան. Զրույց Պղնձե քաղաքի.—«Հանդես ամսօրյա», 1—4, 1958, էջ 27—28: Հ. Ն. Ա. Ն. յան. Հայկական մատենագիտութիւն. հ. Ա, Երևան, 1959, էջ 625: Պատմութիւն վասն մանկանն եւ աղջկանն, Պատմութիւն յաղագս Փահլու թագաւորին, աշխ. Ա. Սրապյանի. Երևան, 1983, էջ 13, 45 (այսուհետև՝ Ա. Սրապյան):

² Ա. Սրապյան, էջ 9, 23—24, 46:

³ Ն. Անդրիկյան. Միջին դարու վեպերեն.—«Բազմավեպ», 1906, № 8, էջ 341—347: Ա. Զոպանյան. Հայ էջեր. Փարիզ, 1912, էջ 14—16: Պ. Մուրադյան. «Պատմութիւն Պղնձե քաղաքի» զրույցի հայկական և վրացական պատմութիւնների և նրանց փոխհարաբերության շուրջը.—«Բանբեր Մատենադարանի», № 6, 1962, էջ 249: П. Мурадян. Армянско-грузинские литературные взаимоотношения в XVIII в., Ереван, 1966, с. 52—69: Ս. Հարութիւնյան. Հայ ժողովրդական հանելուկներ. Երևան, 1965, էջ 315, 316, 318, 319, 321: Հ. Սիմոնյան. Հայ միջնադարյան կաթաներ. Երևան, 1975, էջ 190—195: Ա. Մնացականյան. Հայ միջնադարյան հանելուկներ. Երևան, 1980, էջ 24, 25, 28, 52, 63—67, 108: А. Н. Симонян. Армянские редакции повести о мудрой девице.—В кн.: Русская и армянская средневековые литературы. Л., 1982, с. 7—79; А. А. Симонян. Первые армянские переводы памятников светской литературы.—В кн.: Армянская и русская средневековые литературы. Ереван, 1986, с. 48—49.

⁴ Ն. Անդրիկյան. նշվ. աշխ., էջ 342—347: Նման եզրակացութեան նա հանգել է, համեմատելով այն «1001 գիշեր» ժողովածուի «Բավադդուդ» հեքիաթի հետ և հայտնաբերելով 7 զուգահեռ առաջադրվող հանելուկների թվում: Սակայն, ինչպես ցույց կտրվի ստորև, նման ընդհանրութիւնը բացատրվում է սոսկ այդ հանելուկների մի երրորդ, ընդհանուր ազդրից քաղված լինելու պարագայով:

կան իսկական զուգահեռի հայտնաբերման առաջնությունը պատկանում է Ա. Զոպանյանին, մի փաստ, որ առ այսօր մնացել է ստվերում⁵:

Մինչև այժմ Վանական և աղջկան պատմության հայկական տարբերակի ուսումնասիրությունն ընթացել է զրեթե բացառապես հայագիտական տեսանկյունից: Դեռևս ոչ մի փորձ չի արվել համեմատելու հայերեն թարգմանությունը անմիջականորեն արաբերեն բնագրի հետ, մինչդեռ ակնհայտ է, որ նման մի համեմատություն կարող էր նոր լույս սփռել այս հուշարձանի հետ կապված մի շարք շուծված խնդիրների վրա և, մանավանդ, հնարավորություն կընձեռներ վերջապես պարզելու, թե իրո՞ք հայերեն թարգմանությունն ունեն նաև մի շարք այլ լեզուներով պատումներ, որոնք նույնպես առ այսօր չեն համեմատվել հայերենի հետ:

Առայժմ հայտնի են Վանական և աղջկան պատմության նաև հետևյալ տարբերակները՝ վրացական⁶, արաբական, պարսկական, ասորական, հրեական, տաջիկական, ուզբեկական, թուրքական⁷:

Բացառությամբ Վանական և աղջկան պատմության վրացական և պարսկական տարբերակների, որոնք քիչ թե շատ ուսումնասիրված են, մնացյալ այլալեզու տարբերակները կամ համարյա բոլորովին ուսումնասիրված չեն, կամ նոր են միայն սկսում զրավել ուսումնասիրողների ուշադրությունը: Դեռևս չի պարզված, թե ո՞րն է գոյություն ունեցող տարբերակներից ամենահինը, հետևաբար և նախնականը, ե՞րբ է ստեղծվել: Այս խնդիրը հնարավոր կլինի լուծել միայն այն ժամանակ, երբ պարզվեն բոլոր լեզուներով գոյություն ունեցող տարբերակների թարգմանության աղբյուրը և ժամանակը: Պատմության ուսումնասիրությունը դժվարացնում է այն հանգամանքը, որ առ այսօր գոյություն չունեն նրա այլալեզու տարբերակների աշխարհով մեկ ցրված բնագրերի (ձեռագիր և տպագիր) քննական հրատարակությունները: Հայկական տարբերակի քննական բնագրի հրատարակումը փաստորեն առաջին քայլն է այդ ասպարեզում:

Ինչպես հաճախ, այնպես էլ նշված տարբերակների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ այս պատմությանը, նրա բազմադարյան գոյության ընթացքում, ուղեկցել է միևնույն երևույթը՝ նրա սյուժեն (ֆաբուլան) ամբողջությամբ վերցրած և նրա միջին մասը, այն է՝ «հարցմունքը», ապրել և զարգացել են միմյանցից անկախ, յուրաքանչյուր սեփական ուղիով: Դրա հետևանքով առաջացել են պատմության երկու հիմնական տարբերակ.

1. Սյուժեն ինքնին է զարգացում ապրել, ձեռք բերելով նորանոր մանրամասներ, բարդանալով և այնքան հեռանալով նախնական վիճակից, որ սկսել է ընկալվել որպես մեկ այլ, նոր պատմություն:

⁵ Ա. Զոպանյան, Ն. Անդրեկյանից անկախ, «1001 գիշերի» ֆրանսերեն թարգմանության մեջ մատնանշել է մեկ այլ հեքիաթ՝ „Paroles sous les 99 têtes coupées” որն էլ հենց հանդիսանում է հայերեն թարգմանության արաբական նախորդնակը: Տե՛ս Ա. Զոպանյան, Իշխ. աշխ., էջ 170-176 և Le Livre des Mille nuits et une nuit, trad. par J. C. Mardrus. T. XIII, Paris, 1910, p. 217-235.

⁶ Վրացական պատումը թարգմանված է հայերենից. տե՛ս А. С. Х а х я н о в. Очерки по истории грузинской словесности, вып. 3, М., 1901, с. 162. прим. I. Պ. Մ ու ր ա դ յ ա ն. «Պատմութիւն Պղնձէ քաղաքի» զրուցի հայկական և վրացական պատումների և նրանց փոխհարաբերության շուրջը, էջ 219. П. Мурадян Армяно грузинские литературные взаимоотношения в XVIII веке, с. 52-69.

⁷ Զրույցը թուրքերեն (նաև հայատառ թուրքերեն) է թարգմանվել հայերենից. տե՛ս Ա. Մ ր ա դ յ ա ն, էջ 38: Տաջիկական և ուզբեկական պատումները վերաբերում են հիմնականում XIX դարին (հայտնի է նաև XVIII դարի մի ձեռագիր). ավելի մանրամասն տե՛ս Н. Н. Т у м а н о в и ч. Описание персидских и таджикских рукописей Института Востоковедения АН СССР. Вып 6-Фольклор (Занимательные рассказы и повести). М., 1981, с. 16 (№ 1/10), с. 75 (№ 8 I), с. 102, (№ 33) (այսուհետև՝ Туманович).

2. Սյուժեն պահպանվել է իր նախնական վիճակով, իսկ դարգացում ապրել է պատմության միջին մասը՝ հարցմունքը, ավանդական «երև չհարցից» վերաճելով իսկական հարցարան-հանրադիտարանի, իր մեջ ներառելով ամենարազմտության աղբյուրներից քաղված հարցեր: Այդպիսով «Մանկան և աղջկան պատմությանն» են ոկսել առնչվել բաղմաթիվ և բազմալեզու այլ ստեղծագործություններ, որոնք յուրօրինակ «հարցերի (հանելուկների) մատակարարման» աղբյուր են ծառայել նրա համար: Յուրաքանչյուր լեզվով գոյություն ունեցող տարբերակում հարցերն ունեն ուրույն բովանդակություն, թեև մասամբ նաև կրկնվում են:

Ինչպես տեսնում ենք, «Մանկան և աղջկան պատմության» ուսումնասիրությունը «միահյուսվում է» նաև պատկանելի թվով այլ դրական հուշարձանների հետազոտության հետ, որոնք ստեղծված են տարբեր ժամանակներում և պատկանում են տարբեր դրականությունների: Այս հանգամանքը ստիպում է հետազոտությունները ծավալել ոչ միայն խորությամբ, այլև լայնությամբ, հետևաբար բանասերներից դեռևս շատ ջանքեր ու ժամանակ կպահանջվի:

«Մանկան և աղջկան պատմությանը» ուղղակի կամ անուղղակի կերպով առնչվող բաղմաթիվ հարցմանց պրքերից առաջին համեմատաբար լավ են ուսումնասիրված միայն «Թավադգուդը» և «Беседа трех Святителей» երկը⁸: «Թավադգուդը» ուսումնասիրողները, մասնավորապես, համակարծիք են այն հարցում, որ նախապես այն եղել է ինքնուրույն, «Հազար ու մեկ գիշերի» հետ ոչ մի կապ չունեցող ստեղծագործություն և վերջինիս մեջ է ընդգրկվել նրա այսպես կոչված «Բողոգդյալ շերտի» կազմավորման ընթացքում (X—XII դդ.)⁹:

Մասնավորապես, «Թավադգուդը» և «Մանկան ու աղջկան պատմությունը» միմյանց են առնչվում ոչ միայն վերևում հիշատակված 7 համընկնող հարցերով: Դրանք նախ և առաջ իրենց կառուցվածքով և բնույթով նույնական երկեր են: Երկուսն էլ իրենցից ներկայացնում են բազմաբնույթ հարցերի ու դրանց պատասխանների յուրօրինակ ամբողջություն, որն ընդգրկված է որևէ պատմությամբ, ընդ որում պատմության սյուժեն անպայման ենթադրում է գործող անձերից մեկի գիտելիքների քննում՝ առաջադրվող հանելուկների կամ հարցերի միջոցով: Երկու դեպքում էլ դործող անձերից մեկը իմաստուն աղջիկն է, որն ըստ մի տարբերակի («Թավադգուդը») իմաստունությամբ գերազանցում է բոլորին, իսկ ըստ մյուսի («Մանկան և աղջիկ») ի վերջո իրեն պարտված է ճանաչում արքայազնից: Այլ կերպ ասած, այս երկու ստեղծագործություններն էլ պատկանում են գիական հուշարձանների այն տիպին, որոնք միջնադարում լայնորեն տարածված էին ինչպես Արևելքի, այնպես էլ Արևմուտքի երկրներում և կրում էին «Գիրք հարցմանց» (Fragebücher, книги-вопросники կամ вопросы и ответы preguntas y respuestas)¹⁰ անվանումը: «Հարցմանց գրքերի» մասին լին ընդգրկվում այլազան աղբյուրներից քաղված հարցեր, որոնք կրում էին կամ որոշակի, միատարր բնույթ (ասենք, զուտ կրոնական), կամ էլ՝ ոչ միատարր, այս դեպքում արդեն վերաբերելով զանազան գիտությունների և այլ ասպարեզների: Որոշ դեպքերում հարցերի և պատասխանների ամ-

⁸ Մանրամասն մատենագիտությունը տե՛ս Ив. Жданов. Беседа трех Святителей и Joca Monachorum.—Журнал Министерства народного просвещения, СПб., 1892. г. CCLXXIX (январь), с. 157—166.

⁹ E. Littmann. Tausendundeine Nacht in der Arabischen Literatur. Tübingen, 1923, S. 23; J. Horowitz. Die Entstehung von Tausendundeine Nacht.—La Revue des Nations, Geneva, 1927, № 4, (Avril), S. 103; N. Elisséeff. Thèmes et motifs des 1001 Nuits. Essai de classification. Beyrouth, 1929, p. 40—41.

¹⁰ Дж. Тьякно, История испанской литературы, Т. 2, М., 1886, с. 1—3.

բողոքությունը պարփակվում էր որևէ համապատասխան սյուժեի մեջ, որը թույլ էր տալիս դրանք տալ գործող անձանց անունից, իսկ ամենից հաճախ հարցերն ու պատասխանները ուղղակի հաջորդում էին միմյանց՝ առանց որևէ սյուժեի կամ գործող անձի միջամտության: Յուրաքանչյուր միջավայր, բնականաբար, հարցերի վրա թողնում էր իր կրոնական ու մշակութային առանձնահատկությունների դրոշմը, սակայն կառուցվածքային սկզբունքն ամենուր մնում էր նույնը: Ինչպես իրավամբ նկատում է Յ. Հորովիցը, «բոլոր այս հարցմանց գրքերը նման են միմյանց կառուցվածքով և մասամբ նույնիսկ բովանդակությամբ»¹¹: Վերջին հանգամանքը բացատրվում է հարցերի քաղման աղբյուրների ընդհանրությամբ: Այսպես, օրինակ, ռուսական «Беседа трех Святителей» պատմության մեջ, ինչպես նաև ժիշարք հունական, լատինական ու սլավոնական նույնատիպ ստեղծագործություններում պարունակվող բազմաթիվ հարցերի ընդհանրությունը բացատրվում է հենց դրանով¹²: Նույն պատկերին ենք հանդիպում նաև «Մանկան և աղջկան պատմության» և «Беседа трех Святителей» հուշարձանի մեջ ընդգրկված հարցերի քաղման աղբյուրները համեմատելիս. այսպես, այս երկու երկերում էլ հարցերի մի մասը քաղված է միևնույն աղբյուրից՝ հունարենից թարգմանված «Հարցմունք Բարսղի և պատասխանիք Գրիգորի» ստեղծագործությունից¹³: «Մանկան և աղջկան պատմության» և «Թավադդուդի» յոթ հարցերի համընկնելու պատճառը, ամենայն հավանականությամբ, նույնպես այդ երկույթն է:

Հարցմանց գրքերի աստիճանական հարստացումը տարբեր աղբյուրներից քաղված հարցերով կարելի է դիտել նաև «Թավադդուդի» իսպաներեն թարգմանություն օրինակով. այսպես, ըստ Յ. Հորովիցի, արաբերենից թարգմանվելուց հետո «Թավադդուդի» իսպաներեն տեքստի մեջ են մտցվել «Ադրիան կայսեր զրույցը էպիտոս մանկան հետ» երկից քրիստոնեական բնույթի հարցեր¹⁴:

Ինչպես կհամոզվենք ստորև, «Մանկան և աղջկան պատմության» կապը «Հազար ու մեկ գիշեր» ժողովածուի հետ խիստ պայմանական է. այն վերջինիս մեջ է գետնի վրա ճիշտ այնպես, ինչպես «Թավադդուդը», «Պղնձե քաղաքի պատմությունը»¹⁵, Խիկար Իմաստունի¹⁶, յոթ վեպերների (յոթ իմաստասիրացի)¹⁷ և շատ այլ ինքնակա պատմությունների: Այդ իսկ պատճառով էլ «Մանկան և աղջկան պատմության» արաբական նախօրինակը բացառվում է «Հազար ու մեկ գիշերի» զանազան խմբագրությունների մեծ մասում: Երբ է «Մանկան և աղջկան պատմությունն» ընդգրկվել «1001 գիշերի» արաբերեն բնագրի մեջ՝ դեռևս պարզված չէ, մինչդեռ դա կարող էր կողմնորոշել մեզ հայերեն թարգմանության ժամանակը ճշտելու հարցում,

¹¹ J. Horovitz. Op. cit., S. 104.

¹² Ив. Жданов. Указ. соч., с. 157—166.

¹³ Նույն տեղում, էջ 157—159: Տե՛ս նաև Ա. Մանգակյան. նշվ. աշխ., էջ 64—65:

¹⁴ J. Horovitz. Op. cit., S. 104. «Թավադդուդի» մասին ավելի մանրամասն տե՛ս նաև V. Chauvin. Tawaddoude ou la doctrine esclav. — Le Mouvement. Liege, 1909; J. Horovitz. Tawaddud — Zeitschrift der Deutschen Morgenländischen Gesellschaft. Leipzig, 1903, № 57, S. 173—176; R. Levy. A Baghdad chronicle. Cambridge, 1929, p. 247—251; Г. Э. фон Грюнебаум. Элементы греческой формы в «Сказках 1001 ночи». — В кн.: Арабская средневековая культура и литература. Сборник статей зарубежных ученых, М., 1978, с. 188.

¹⁵ В. В. Лебедев. Следы южноарабской фольклорной традиции в сказках «1001 ночи». — Народы Азии и Африки, 1973, № 1, с. 110.

¹⁶ Պատմութիւն եւ խրատք Խիկարայ Իմաստնոյ, աշխ. Ա. Մարտիրոսյանի. գ. Ա, Երևան, 1969, էջ 11—12, 16:

¹⁷ Повесть о царе ал-Мутаввадже, о царице, мудреце Синдбаде, о семи везирах и о рассказе каждого из них, пер. с араб. М. Н. Османова. М., 1967, с. 5—9.

քանի որ «Մանկան և աղջկան պատմությունը» ևս, ինչպես և «Պղնձե քաղաքի պատմությունը»¹⁸, հայերեն է թարգմանվել ամենայն հավանականությամբ դեռևս մինչև «1001 գիշերի» բաղկացուցիչ մաս դառնալը:

Պատմության հիմնական մոտիվը՝ խրթին հանելուկներ լուծելու առաջադրանքը, որը չկատարելու դեպքում մահապատիժ է սպառնում, իսկ կատարելու դեպքում հաղթողն իրավունք է ստանում ամուսնանալու արքայադստեր հետ, շափազանց մեծ հնություն ունի և արտացոլվել է զանազան հնագույն գրական հուշարձաններում: Այսպես, օրինակ, հունական ժողովրդական առասպելում էդիպոսի մասին, որի հիման վրա Սոփոկլեսը գրել է իր «Էդիպոսը Քեթիկոս արքան» (մոտ մ. թ. ա. 430 թ.), այս մոտիվը հանդես է գալիս հետևյալ տեսքով. էդիպոսը հասնում է Թեբեի դարպասներին, ուր նստած է Սֆինքսը՝ կես-առյուծ, կես-կին. Սֆինքսը հանելուկ էր առաջարկում բոլոր անցորդներին, որը լուծելու դեպքում կուլ էր տալիս նրանց: Էդիպոսը կարողանում է լուծել Սֆինքսի հանելուկը, ոչնչացնում է նրան և ըստ հայտարարված պայմանի, որպես Թեբեի ազատարար, դառնում Թեբեի թագավորը, ամուսնանալով Իոկասսանի՝ Թեբեի արքայազուտեր հետ: Նշված մոտիվի մի շարք դրսևորումներին ենք հանդիպում նաև աշխարհի տարբեր ժողովուրդների հեքիաթներում¹⁹:

Այժմ ավելի հանգամանորեն կանդ առնենք «Մանկան և աղջկան պատմության» այլալեզու տարբերակներից նրանց վրա, որոնք կարող են որոշիչ դեր ունենալ հայերեն թարգմանության բնագրի հայտնաբերման հարցում:

Պատմության արաբական տարբերակը մեզ է հասել մի շարք ձեռագրերում, որոնք պահվում են աշխարհի տարբեր գրապահոցներում²⁰: Նախկին խորհրդային Միությունում առայժմ հայտնի միակ օրինակը, որը թվագրվում է XVIII դարով, պահվում է Ս. Պետերբուրգում, Արևելագիտության ինստիտուտի գրապահոցում²¹:

Բացի այդ, Ս. Պետերբուրգի Սալտիկով-Շչեդրինի անվան պետական հանրային գրադարանում պահվում են հրատառ արաբերեն ձեռագրերի չորս պատառիկներ, որոնք համարյա ամբողջությամբ վերարտադրում են մեզ հետաքրքրող զրույցը: Այս ձեռագրերը թվագրված են համապատասխանաբար XIV—XV դդ., XV դարով, XVI դարի առաջին կեսով, XVII—XVIII դդ.²²:

18 Հ. Մկրտչյան. «Պղնձե քաղաքի պատմության» արաբական և հայկական տարբերակները. — «Պատմա-բանասիրական հանդես», 1986, № 2, էջ 133:

19 The types of the Folktale. A classification and bibliography. A. F. A. n. e. z. "Verzeichnis der Märchentypen" translated and enlarged by S. Thompson. Helsinki, 1961, p. 256, № 851 A. Հմմտ. նաև p. 285, № 851, p. 297, № 876.

20 W. Pertsch. Die arabischen Handschriften der herzoglichen Bibliothek zu Gotha. Bd. IV, Gotha, 1882, S. 403—404, № 2651/2, S. 406, № 2653/2, S. 471, № 264/5; M. G. De Slane. Catalogue des manuscrits arabes de la Bibliothèque Nationale. Paris, 1895, p. 621, № 3337, p. 622, № 3641/2, p. 626, № 3667/5; E. Sachau. Verzeichnis der syrischen Handschriften, Erste Abteilung. Berlin, 1899, S. 437, № 133/8 (այսուհետև՝ E. Sachau).

21 Ձեռագրի նկարագրությունը տե՛ս А. Б. Халидов. Каталог арабских рукописей Института народов Азии. Вып. 1, Художественная проза. М., 1960, с. 98—99, № 113; Арабские рукописи Института Востоковедения АН СССР, краткий каталог, под ред. А. Б. Халидова. Ч. 1, М., 1986, с. 414, № 9254. Ձեռագրի շիֆրն է В—1122, էջ 1բ—14ր:

22 Арабские сочинения в еврейской графике. Каталог рукописей, сост. В. В. Лебедев. Л., 1987, с. 92, № 433, 434, 435, 436. Ձեռագրերի շիֆրերն են Евр.—ар.—II 1540, Բ. 1ա—2բ, Евр.—ар. II 1475, Բ. 1ա—6բ, Евр.—ар. II. 1365, Բ. 1ա—4բ, Евр.—ар. I. 868, Բ. 1ա—1բ:

Որպեսզի պարզ դառնա, թե ինչ առնչություն ունեն միմյանց հետ արաբական և հրեատառ արաբերեն հիշյալ պատումները, դիմենք մի համառոտ պատմական ակնարկի: Հայտնի է, որ Արաբական խալիֆայության ստեղծման առաջին խոշորագույն պարբերությունը դարձավ Մերձավոր Արևելքի երկրներում ապրող կարաիմների և ուրարանիտների խոսակցական լեզուն, մինչդեռ նրանց կողմից օգտագործվող գիրը շարունակում էր մնալ եբրայերենը²³: Այսպիսով առաջացան եբրայատառ արաբերեն գրվածքները, որոնք պահվում են աշխարհի տարբեր գրադարաններում: Այս գրվածքներն ամենատարբեր բնույթի են, այդ թվում և դեղարվեստական-բանահյուսական. վերջիններիս թվում կարելի է գտնել բազմաթիվ արաբական ժողովրդական հեքիաթներ, զրույցներ, նովելներ, երգեր, բանաստեղծություններ և այլն, որոնք «ակնառու կերպով վկայում են Մերձավոր Արևելքի և Հյուսիսային Աֆրիկայի հրեաների ու կարաիմների ցուցաբերած մեծ հետաքրքրության մասին դեպի արաբական բանահյուսությունը»²⁴: Հայտնի են նաև հիշյալ եբրայատառ արաբերեն տեքստերի մի շարք հրատարակություններ, որոնք վերաբերում են XIX դարի վերջին—XX դարի սկզբին և երևան են եկել աշխարհի տարբեր ծայրերում (Ալժիր, Բազդադ, Բոմբեյ, Օրան, Թունիս, Լիվոռնո և այլն)²⁵:

Ի դեպ, «Մանկան և աղջկան պատմության» հրատառ արաբերեն տարբերակը հիշատակվում է այն ստեղծագործությունների թվում, որոնք «դարեր շարունակ մեծ ժողովրդականություն են վայելել հրեական միջավայրում» և որոնք «կազմում էին ինչպես ձեռագիր, այնպես էլ տպագիր հրեական գրքի անվանացանկի անկապտելի մասը Մերձավոր Արևելքի և Հյուսիսային Աֆրիկայի երկրներում»²⁶:

Այսպիսով, հրեատառ արաբերեն վերոհիշյալ ձեռագրերը մեզ լրացուցիչ տեղեկություններ են ընձեռում արաբական տարբերակի մասին. վերաբերելով անհամեմատ ավելի վաղ ժամանակաշրջանի, քան վերոհիշյալ արաբերեն տառադարձ, հրեատառ արաբերեն ձեռագրերը արտացոլում են պատմության արաբական տարբերակի ավելի նախնական վիճակը և արժեքավոր են առաջին հերթին հենց դրանով:

Ցավոք սրտի, մինչև այժմ հրատարակված չեն ո՛չ արաբական, ո՛չ էլ հրեատառ արաբերեն պատումների քննական բնագրերը, որ կարող էր թույլ տալ ավելի ճիշտ պատկերացում կազմելու դրանց մասին և, հետևաբար, ավելի ճիշտ եզրակացություններ անել դրանք հայերեն տեքստի հետ համեմատելիս: Իսկ ձեռագրերի աշխարհով մեկ սփռված լինելը մեզ համար անմատչելի է դարձնում դրանց ուսումնասիրությունը: Սակայն նույնիսկ մեզ մատչելի միակ արաբերեն ձեռագրի, ինչպես նաև վերոհիշյալ չորս հրեատառ արաբերեն ձեռագրերի հետ հայերեն տարբերակի համեմատությունը թույլ է տալիս մի շարք հետաքրքիր և նույնիսկ անսպասելի եզրակացություններ անել դրանց փոխհարաբերության մասին:

«Մանկան և աղջկան պատմության» հայկական տարբերակի համեմատությունը В—1122 արաբերեն ձեռագրի տեքստի հետ ցույց է տալիս դրանց

²³ Նույն տեղում, էջ 3:

²⁴ В. В. Лебедев, Неисследованные рукописные материалы по истории фольклорных взаимосвязей народов Востока.—В кн.: Проблемы источниковедческого изучения рукописных и старопечатных фондов. Сборник научных трудов. 2, Л., 1980, с. 135. Տե՛ս նաև՝ В. В. Лебедев, Арабские рукописи советских хранилищ и вопросы изучения арабско-еврейских культурных взаимосвязей.—В кн.: Проблемы арабской культуры, М., 1987, с. 269—278.

²⁵ В. В. Лебедев, Проблемы источниковедения средневекового арабского фольклора, автореф. диссерт. на соиск. уч. степени доктора филолог. наук, Л., 1980, с. 40.

²⁶ Նույն տեղում, էջ 39—40:

10 «Հանդես», № 1

քովանդակությունների նույնությունը (նույն էպիգրոֆների նույն հերթակա-
նությունը), բացառությամբ որոշ աննշան մանրամասների.

1. Արաբերեն տարբերակում գլխավոր հերոսը արքայազն է և ոչ թե
իշխանի որդի, ինչպես հայերենում, իսկ նրա ընտանիքի սնանկանալու պատ-
ճառը չի հիշատակվում²⁷, մինչդեռ հայերենում որդին է շոյալուսմ-վատնում
ողջ ունեցվածքը:

2. Ձիավորը, որին արքայազնը հանդիպում է ճանապարհին, նրան է
հանձնում նամակը՝ փաթաթված մի թաշկինակի մեջ²⁸, և վերջինս, այն վերց-
նելիս, համբուրում է ու դնում գլխին²⁹, մինչդեռ հայերենում մանուկն ուղ-
ղակի նամակը դնում է իր կաշվե պայուսակի մեջ:

3. Երբ արքայազնը խմելու ջուր է փնտրում և չի դանում, նկատում է,
որ իր ձին առատորեն քրտնել է, քանդում է թաշկինակը, որի մեջ փաթաթ-
ված էր նամակը, դրանով սրբում ձիու քրտինքը և խմում այն³⁰, մինչդեռ
հայերենում մանուկը փնտրում-գտնում է մի հին ջրհոր, այնտեղից ջուր է
հանում իր կաշվե պայուսակով, որի մեջ գտնվում էր նամակը:

4. Արաբական տարբերակում արքայազնին արքայադուստր տված 37
հարցերից հայկականում կրկնվում են միայն 13-ը, իսկ մյուսները տարբեր
են (արաբականում քաղված են մահմեդական, ավանդույթից, իսկ հայկա-
կանում՝ քրիստոնեական):

5. Արքայադուստրը արքայազնի առաջարկած հանելուկի վերջին մասը
տարբերվում է հայկական տարբերակի համապատասխան մասից, քանի որ
երկու տարբերակներում այլ են այն երկու էպիգրոֆները, որոնց մասին նա
հարցնում է, այն է՝ ջրհորից կաշվե պայուսակով ջուր հանելու էպիգրոֆը
հայկականում և նամակը գլխին դնելու, այնուհետև ձիու քրտինքով ծարա-
վը հագեցնելու մասին էպիգրոֆը արաբականում:

6. Հայկական տարբերակում արքայադուստրն է իրեն պարտված ճա-
նալում, մինչդեռ արաբականում՝ նրա հայրը³¹:

Իսկ այժմ անդրադառնանք հայկական և արաբական տարբերակների
համընկնող հատվածներին, ավելացնելով նաև երբայատառ արաբերեն պա-
տումի համապատասխան հատվածները³²:

հայ.	արաբ.	երբայատառ արաբ.
Ա. Ասէ աղջիկն.	Եվ թարգմանչուհին ա-	Եվ ասաց նրան. «Մի
— Ի՞նչ գերեզման էք	սաց նրան. «Տիրուհիս ա-	բանի մասին հարցնեմ քեզ
շարժուն և զնայուն:	սում է քեզ. «Ասա ինձ	ասա ինձ. շարժվող գերեզ-
Ասէ մանուկն.	շարժվող գերեզմանի մա-	մանի մասին, որի տեղը
— Յունան մարգարէն էր,	սին, որի տեղը ձենդանի	կենդանի է:
որ ձուկն կլաւ, շարժուն	է:	Եվ նա պատասխանեց
և գնայուն եղև ³³ :	Եվ նա պատասխանեց	նրան ու ասաց. «Շուրջ Յու-
	նրան ու ասաց. «Շարժվող	նան մարգարեն է, որին
	գերեզմանը կետն է, որը	կույ տվեց կետը, խաղա-
	կույ տվեց Յունան մարգա-	ղություն նրան» ³⁵ :
	րին, խաղաղություն նը-	
	րան» ³⁴ :	

27 Հմմտ. B—1122 ձեռագրի 1 ր թերթը:

28 Հմմտ. նույն ձեռագրի 3 ր թերթը:

29 Հմմտ. նույն ձեռագրի 3 ր թերթը:

30 Հմմտ. ձեռագրի 4 ր թերթը:

31 Հմմտ. նույն ձեռագրի 14 ր թերթը:

32 Տեխնիկական պատճառներով արաբերեն և երբայատառ արաբերեն հատվածները մեջ
ենք բերում հայերեն թարգմանությամբ:

33 Ա. Ս ր ա պ յ ա ն, էջ 68:

34 Հմմտ. B—1122 ձեռագրի 6 ր թերթը:

35 Հմմտ. Eap.—ap. I 958 ձեռագրի 1 ր թերթը:

հայ.

2. Ասէ աղջիկն.

— Այն ի՞նչ տեղ էր, որ քանի աստուած զաշխարհս ստեղծեց էր, նա արեգակն ի վերան շէր դիպեր:

Ասէ մանուկն.

Մովուն յատակն էր, որ Մովսէս պատառնաց զաւազանամ, և անցոյց զխորանի ընդ այն³⁶:

արաբ.

Եվ թարգմանչուհին ասաց նրան. «Տիրուհիս ասում է քեզ. «Ասա ինձ մի հողի մասին, որն արև է տեսել միայն մեկ անգամ»:

Եվ պատանին ասաց նրան. «Այդ ծովի հատակն է, որին իր զավազանով զարկեց Մուսան և երկու կեսի ճեղքեց, և անցան Իսրայելի որդիք շոր դետնի վրայով...»³⁷:

կրեթյառաւ արաբ.

Եվ ասաց նրան. «Ասա ինձ [այն] հողի մասին, որն արև տեսավ մի անգամ»:

Եվ [պատանին] ասաց նրան. «Դա այն ժամանակ էր, երբ Մուսա Մարգարեն, խաղաղություն նրան, իր զավազանով հարվածեց ծովին և ճեղքեց այն, և Իսրայելի որդիք անցան շոր դետնի վրայով; և արևն այն տեսավ մեկ անգամ»³⁸:

3. Ասէ աղջիկն.

— Այն ի՞նչ ծառ էր, որ ունի տասներկու ճիւղք և ամէն ճիւղք՝ երեսուն տերև, և պտուղ նորա սև ու սպիտակ էր:

Ասէ մանուկն.

— Մահն՝ տարին, տասներկու ճիւղքն ամիսքն է տասներկու, տերևն երեսուն օրն է, պտուղն սև ու սպիտակ՝ գիշերն ու ցորենին է³⁹:

Եվ թարգմանչուհին ասաց նրան. «Տիրուհիս ասում է քեզ. «Ասա ինձ մի ծառի մասին, որի վրա 12 ճյուղ կա, իսկ ամեն ճյուղին՝ 30 տերև, և ամեն տերևի մի կեսը սպիտակ է, իսկ մյուս կեսը՝ սև»:

Եվ պատանին պատասխանեց նրան ու ասաց. «Մահ տարին է, իսկ 12 ճյուղը՝ 12 ամիսը, իսկ ամեն ամիսը 30 օր է, ցերեկը՝ սպիտակ, իսկ գիշերը՝ սև»⁴⁰:

Հետո ասաց նրան. «Ասա ինձ մի ծառի մասին, որն ունի 12 ճյուղ, և ամեն ճյուղի վրա 30 տերև կա, իսկ ամեն տերևի տակ՝ երկու դրոշ, մեկը՝ սպիտակ, իսկ մյուսը՝ սև»:

[Պատանին] ասաց. «Այդ տարին է և նրա ամիսները. գիշերներն ու ցերեկները»⁴¹:

Հողովածն օրինակներով շփանրաբեռնելու համար ոահմանափակվում ենք մեջբերվածներով, մինչդեռ դրանց թվին կարելի էր ավելացնել ևս ինքնաշարկ է նշել, որ նման համընկնող հատվածներ առկա են ոչ միայն հայերեն, արաբերեն և եբրայատառ արաբերեն պատումների հարցերում ու պատասխաններում, այլև բուն պատմության զանազան դրվագներում: Այսպես, օրինակ, զրուցի հայկական հինգ խմբագրություններից չորսում արքայադուստրն ունի «պառաւ մի թարգման», որի միջոցով է խոսում մանկան հետ⁴². նույն պատկերն ենք գտնում նաև արաբերեն և հրեատառ արաբերեն տարբերակներում, միայն այն տարբերությամբ, որ հայերենում թարգմանչուհու մասին հիշատակվում է ընդամենը մեկ քանի անգամ, մինչդեռ վերջին երկու տարբերակներում՝ յուրաքանչյուր հարցը տալիս: Ահա ևս մի օրինակ. «Ասաց աղջիկն: Ընդ իւր թարգմանն՝ ընդ մանկանն թէ՛ «Ուղեհ» որ տամ քեզ յայն կթիւայէն, որ քո ընկերտացի տվի»⁴³:

36 Հմմտ. Ա. Սրապյան, էջ 69—70:

37 Հմմտ. Բ—1122 ձեռագրի 6 բ թերթը:

38 Հմմտ. ԵՅԲ.—ՅԲ. I 858 ձեռագրի 1 ա թերթը:

39 Հմմտ. Ա. Սրապյան, էջ 68:

40 Հմմտ. Բ—1122 ձեռագրի 89 բ թերթը:

41 Հմմտ. ԵՅԲ.—ՅԲ. II 1365 ձեռագրի 3 բ—4 ա թերթերը, ինչպես նաև I 858 ձեռագրի 1 բ թերթը և II 1475 ձեռագրի 1 բ թերթը:

42 Ա. Սրապյան, էջ 54, 65, 80, 99 և այլն:

43 Նույն և հղում, էջ 54. Հմմտ. նաև էջ 80, 87 և 99:

աւար.

Եվ թարգմանչուհին ասաց նրան. «Տիրուհիս ասում է քեզ. «Հեռացիր մինչև վաղը, և եթե ես քեզ հաղթեմ, կխմեցնեմ քեզ քո ընկերների գավաթից»⁴⁴։

Նշենք նաև, որ արաբներին և հրեատառ արաբներին տեքստերը համընկնում են հաճախ բառացիորեն, հատկապես հարցերում և պատասխաններում։ Սակայն, այնուամենայնիվ, հրեատառ արաբներին ձեռագրերի որոշ հատվածներ ակնհայտորեն տարբերվում են արաբներին B—1122 ձեռագրի տեքստից։ Այդ տարբերությունները վկայում են այն մասին, որ արաբներինով ևս, ինչպես և հայերինով, դոյություն են ունեցել այս դրույցի մի քանի խմբազրույթություններ։ Նմանօրինակ այլ պատմությունների նման, այս գրույցը ևս դարերի ընթացքում «էվոլյուցիա է ապրել»։ Այդ են հաստատում նաև երբայատառ արաբներին շորս ձեռագրերի այն հատվածները, որոնք, որոշ մանրամասներում, տարբերվում են միմյանցից։

Ուշագրավ է հատկապես այն փաստը, որ երբայատառ արաբներին ձեռագրերի այն հատվածները, որոնք էապես տարբերվում են արաբներին պատումից, երբեմն դարձանալիորեն նման են հայերին տեքստին։ Այսպես, օրինակ, արաբներին տեքստում, երբ արքայադնը ներկայանում է պալատ՝ արքայադստեր հարցերին պատասխանելու, նրան նստեցնում են մետաքսե քարձի վրա⁴⁵, մինչդեռ հայերին և երբայատառ պատումներում նա նստում է աթոռին։

Եւ մտաւ մանուկն, և բարեւ երեսոյ
Դրին աթոռ ե նստաւ մանուկն⁴⁶։

Եվ [պատանին] ներս մտավ ու ող-
ջունեց և նստեց...⁴⁸։

Եվ նրան աթոռ տվեցին, ու նա նըս-
տեց դրա վրա⁴⁹։

Եվ [պատանին] ներս մտավ ու նըս-
տեց աթոռին⁵⁰։

Բերենք ևս մի օրինակ. արաբներին տարբերակում բացակայում են այն մի քանի հարցերը, որոնցով հայկական և երբայատառ տարբերակներում իր «հարցաքննությունն» է սկսում արքայադուստրը.

Ասէ աղջիկն. «Ո՞վ է քո հայրն»։ Ասէ
մանուկն. «Հովն ու հուրն»։ Ասէ աղջիկն.
«Ո՞վ է քո մայրն»։ Ասէ մանուկն. «Հո-
ղըն և անձրեն»։

.....

Ասէ աղջիկն. «Ո՞վ է քո դայեակն»։
Ասէ մանուկն. «Այն է իմ դայեակն, որ
նա դիս կու տեսնու, ես զնա չեմ տես-
նուր. նա դիմ ձայնն կու լսէ, և ես
զնորա ձայն չեմ լսեր»⁵¹։

Եվ թարգմանչուհին ասաց նրան. «Տի-
րուհիս ասում է քեզ. «Որտեղի՞ց ես
դու»։ [Պատանին] ասաց նրան. «Հորի-
ցես ու մորիցս»։ [Թարգմանչուհին] ա-
սաց. «Ո՞րն է քեզ ծնող մայրը»։— Ա-
սաց. «Հողը»։ Եվ ասաց [թարգմանչու-
հին]. «Իսկ ո՞վ է քեզ դաստիարակել-
մեծացրել»։— Ասաց. «Օրերն ու գիշեր-
ները»⁵²։

⁴⁴ Հմմտ. B—1122 ձեռագրի 8 ր թերթը։

⁴⁵ Հմմտ. II 1475 ձեռագրի 3 ր թերթը, ինչպես նաև 1 ր, 5 ր թերթերը և 1365 ձե-
ռագրի 4 ր թերթը։

⁴⁶ Հմմտ. B—1122 ձեռ. 6 ր թերթը։

⁴⁷ Ա. Ս ր ա պ յ ա ն, էջ 54։

⁴⁸ Հմմտ. II 1475 ձեռագրի 2 ր թերթը։

⁴⁹ Հմմտ. II 1365 ձեռագրի 3 ր թերթը։

⁵⁰ Հմմտ. II 1475 ձեռագրի 3 ր թերթը։

⁵¹ Ա. Ս ր ա պ յ ա ն, էջ 66։

⁵² Հմմտ. II 1475 ձեռագրի 1 ր թերթը, ինչպես նաև II 1365 ձեռագրի 3 ր թերթը։

քով, հայերեն թարգմանության համար որպես բնագիր է ծառայել, ամենայն հավանականությամբ, արաբերեն տարբերակը, սակայն վերջինիս ոչ այն խմբագրությունը, որը ներկայացված է B—1122 ձեռագրում: Ինչպես ցույց տրվեց վերևում, գոյություն են ունեցել արաբերեն տարբերակի մի քանի խմբագրություններ: Այդ խմբագրություններից այն, որը որպես բնագիր է ծառայել եբրայատառ տարբերակի ընդօրինակման համար (մասնավորապես՝ II 1475 և II 1365 ձեռագրերի), գոյություն է ունեցել առնվազն XV դարի վերջից, այսինքն՝ II 1475 ձեռագրի ընդօրինակման ժամանակից առաջ: Այս նախնական արաբերեն խմբագրությունն էլ (կամ վերջինիս շատ մոտ մի այլ խմբագրություն) հանդիսացել է հայերեն թարգմանության բնագի-

1. Եբրայատառ արաբերեն Ebr.—ar. II 1540 ձեռագրի 1 ա թերթը (XIV—VII դդ.):

րը: Հավանական է, որ հետագա որոնումների ընթացքում բացահայտվեն այլ արաբերեն (գուցեև եբրայատառ արաբերեն) ձեռագրեր, որոնցում պահպանված լինի հենց այս խմբագրությունը:

Ուշագրավ է այն հանգամանքը, որ արաբերեն B—1122 ձեռագրի տեքստըն ավարտվում է հետևյալ նախադասությամբ. «Եվ փառք նրան, ով անմահ է, և [թող] մեզ վրա [լինի] նրա ողորմածությունը հավիտյանս հավիտենից, ամեն»⁵⁶: Նույնպիսի քրիստոնեական բանաձևով է ավարտվում նաև հայկական տարբերակը⁵⁷, որ սովորական երևույթ է միջնադարյան նման գրական հուշարձանների համար, սակայն արդյո՞ք դա նշանակում է, որ այդ նախադասությունը ևս հայերեն է թարգմանվել արաբերենից. այն կարող էր ավելացվել հայ թարգմանչի կամ ընդօրինակող գրչի կողմից: Իսկ ինչպե՞ս բացատրել հիշյալ քրիստոնեական բանաձևի առկայությունը արաբերեն տեքստում, որտեղ միաժամանակ բազմիցս կրկնվում է նաև «ամենաբարձրյալն Ալլահն մահմեդական արտահայտությունը»⁵⁸, ինչպես նաև տեղ են գտել մահմեդական բնույթի հարցեր, չխոսելով արդեն առաջին նախադասության մասին, որով սկսվում է տեքստը՝ «Հանուն Ալլահի, որ կենդանի է,

⁵⁶ Հմմտ. B—1122 ձեռագրի 14 բ թերթը:

⁵⁷ Ա. Սր ա պ յ ա ն, էջ 61, 76, 108՝ «Եւ Քրիստոսի մարգասիրին փա՛ռք յաւիտեանս, ամէն»:

⁵⁸ Հմմտ. B—1122 ձեռագրի 1 բ, 3 ա, 4 բ թերթերը և այլն:

տիար-նաման» (կամ «Պատմութիւն տասն վեղիւրների մասին») հուշարձանի մի ձեռագիր պատումում⁶⁹։ Պարսկական հեքիաթների երկու ձեռագիր ժողովածուներում առկա երկու հեքիաթներում ևս հանդիպում ենք մեզ ծանոթ մոտիվին⁷⁰։ Ավելին. մեղ հետաքրքրող մոտիվի բանահյուսական ավանդույթը կենսունակ է և մեր օրերում. դրա վկայութունն են պարսիկ գրականագետ Ե. Բանահավաք Ա. Էնջավիի գրի առած և 1973 թ. Թեհրանում հրատարակած երկու պարսկական ժողովրդական հեքիաթները⁷¹։

Այսպիսով, «Մանկան և աղջկան պատմության» պարսկական տարբերակի անցած բազմադարյան ուղին ևս գալիս է հավաստելու այն, որ այս զրույցը նախապես եղել է ինքնակա մի հուշարձան, որն ուղեկցվել է զուգահեռաբար թե՛ բանահյուսական և թե՛ գրավոր ավանդույթով։ Այլ կերպ ասած, արաբական «1001 գիշերը» ամենևին էլ միակ հեքիաթաշարը չէ, որի մեջ ընդգրկվել է այն, այլ նման հերթական «ընդգրկումների» շղթայի օղակներից մեկը։

Պարսկական բոլոր վերոհիշյալ պատումներից հայկականին ամենից ավելի է մոտենում XVIII դարով թվագրվող այն ձեռագիր տարբերակը, որն առկա է Ս. Պետերբուրգի В—256 (а—275) պարսկերեն ձեռագրում (թ. 146 ր—173 ր)⁷²։ Նշենք դրանց երկուսի միջև եղած նմանություններն ու տարբերությունները։ Նմանությունները հետևյալներն են՝

1. Մոտոյների վաճառելիս պատանին թագավորից ստանում է 100 դինար (հայկական տարբերակում՝ 100 դեկան կամ ֆլորի)։

2. Նամակաբերից նամակն ստանալով, պատանին այն դնում է քսակի մեջ (հայերենում՝ սեկէ քէսա)։

3. Պատանին ջրհորից ջուր է հանում ձիու լկամով (հայերենում՝ պարանով)։

4. Արքայազուտեր հարցերին պատասխանելիս պատանին նստում էր ռսկե ավոդին (նույնը՝ հայերենում)։

5. Արքայազուտեր 27 հարցերից հայերենում կրկնվում են 12-ը։

Այժմ անցնենք տարբերություններին.

1. Պատանու ծնողների սնանկանալու պատճառը պարսկական տարբերակում նրանց վնդվելն է իրենց երկրից՝ դժգոհ ժողովրդի կողմից (հայկականում՝ պատանու վարած շուշլ կյանքը)։

2. Թագաւորական ընտանիքը տարագրության ճանապարհին կողոպտվում է ավազակների կողմից⁷³։

3. Արքայազնը ոտիպված մուրացկանության է դիմում՝ ծնողներին կեղակրելու համար (հայկական տարբերակում նման դրվագ չկա)։

4. Արքայազնը գտնում է տեղի թագավորի կորած որսի բազերին (հայերենում այս դրվագը չկա)։

5. Նամակաբերից նամակը ստանալուց հետո պատանին նրան կորց-

un Jours, conte persans, traduits par Petis de la Croix, nouv. éd. par A. Loiseleur-Deslongchamps. T. 1, Paris 1826, p. 235 - 250, 307—407.

⁶⁹ Туманович, с. 107—108. № 39/8.

⁷⁰ Նույն տեղում, էջ 52, № 3/4, էջ 59—61, № 4/5։

⁷¹ Տե՛ս «Шахзаде Эбрахим и жестокая красавица» և «Что сделал Голь с Саноубар» հեքիաթները՝ Персидские народные сказки, М., 1987, с. 39—43, 105—109, որոնք արտատված են «Кессеха-йе ирани. Джелде-е аввал. Гердавари-йо та' лиф: Сеййед Аболкасем Энджави. Тегеран, 1352/1973 պարսկերեն ժողովածուից։

⁷² Ձեռագիրը պահվում է Արևելագիտության ինստիտուտի Ս. Պետերբուրգի բաժանմունքում։ Ձեռագրի նկարագրությունը տե՛ս Туманович, с. 11—43 (№ 1/10)։ Մեր շնորհակալությունն ենք հայտնում իրանահայ ուսանողուհի Ռ. Մինասյանին, որն իր սիրահոծար օգնությունն է ցույց տվել պարսկերեն տեքստը քարգմանելիս։

⁷³ Ավազակների մասին այս դրվագը խիստ հակիրճ առկա է նաև հայկական խմբագրություններից մեկում. տե՛ս Ա. Սրապյան, էջ 95։

նում է և մոլորվում սաստիկ փսթորկի սկսվելու պատճառով (հայերենում այս դրվագը չկա)։

6. Գլխատված արքայազնների թիվը 500 է (հայերենում՝ 99)։

7. Արքայադուստրն իր հարցերը տալու է ներկայանում դիմակով, 50 նաթիշտների ուղեկցությամբ (հայերենում չկան ո՛չ նաթիշտներ, ո՛չ դիմակ)։

8. Արքայադուստրն իր հարցերը տալիս է առանց որևէ մեկի միջնորդության (հայերենում՝ թագմանչուհու միջոցով)։

9. Արքայադուստրն արքայազնի առաջարկած հանելուկն ունի հետևյալ տեսքը. «Այն ո՞ր արքայազնն է, որ դժբախտացավ և գահից տապալվեց հողին ու արքայությունից՝ մուրացկանության [մեջ], և ծնողների վաճառեց և ապրուստ փնտրելու ու մահվանն ընդառաջ դնաց, և երեկոյան նամագից մինչև լուսաբաց մահվան հետ էր, և լիակատար մահվան ճամփին ինչ-որ բան պատռեց ու ջրհորը գցեց [....], մեկ այլ մահ նրան բռնեց, և այդ մահվան հետ նա շատ վեճեր ունեցավ ու վերջապես դրան էլ հաղթեց...»⁷⁴ (հմտ. հայկական տարբերակը վերևում, էջ 75)։

10. Արքայադուստր հետ ամուսնանալուց հետո արքայազնը զորք է հավաքում և կռվով ետ նվաճում իր հոր կորցրած թագավորությունը (հայկական տարբերակում այս դրվագը բացակայում է)։

Այսպիսով, ակնհայտ է, որ տարբերություններն անհամեմատ ավելի շատ են, քան նմանությունները։ Իսկ ինչո՞վ կարելի է բացատրել եղած նմանությունները։ Պետք է ենթադրել, որ պարսկական այս պատումի հիմքում ընկած է եղել հայկականին մոտ մի խմբագրություն, որը միաժամանակ նրման է և երբայատառ արաբերեն վերոհիշյալ տարբերակին։ Սակայն այդ նախնական հիմքի վրա պարսկական միջավայրում առաջացել է մի բոլորովին այլ, անհամեմատ ավելի ընդարձակ, բազմաթիվ նոր դրվագներով ու մանրամասնություններով հագեցած մշակում, որն, իհարկե, չէր կարող հանդիսանալ հայերեն թարգմանության բնագիրը։ Այնուամենայնիվ, դա մի վկայություն է այն մասին, որ պարսկերենով ևս գոյություն է ունեցել նման մի նախնական խմբագրություն (թերևս արաբերենից թարգմանված, առաջմ հնարավոր չէ այդ հարցին պատասխանել, քանի դեռ չեն հրատարակված արաբական և պարսկական տարբերակների քննական բնագրերը և չեն պարզված դրանց թարգմանության աղբյուրները)։

Այսպիսով, ինչպես ցույց է տալիս պարսկերեն պատումների հետ հայկական տարբերակի համեմատությունը, գրանցից և ոչ մեկը չէր կարող լինել հայերեն թարգմանության բնագիրը։ Հետևաբար, մնում է եզրակացնել, որ հայերեն թարգմանությունն արված է այնուամենայնիվ արաբերենից։ Մնում է պարզել ևս երկու հարց. ո՞վ է հայերեն թարգմանել զրույցը և ե՞րբ։ Ուսումնասիրողները տարբեր կարծիքներ են հայտնել այս առթիվ։ Դժբախտաբար ոչ մի ձեռագրում չի հիշատակված թարգմանչի անունը, իսկ արաբերենից թարգմանված լինելու մասին ասվում է միայն մի ձեռագրի խորագրում⁷⁵, Ն. Անդրիկյանը թարգմանությունը թվագրում է XIV դարի առաջին կեսով, վերագրելով այն Կոստանդին Նրզնկացուն⁷⁶, Ն. Ակինյանը թարգմանության ժամանակը համարում է X դարը (950—1000 թթ.), հիմնվելով այն փաստի վրա, որ Հոռմի Ս. Վլասի հայոց հյուրանոցի № 33/24 ձեռագրի խորագրում հիշատակվում է Դավիթ Կուրապաղատի անունը, իսկ թարգմանիչներին համարում է տայեցիներ⁷⁷, Պ. Մուրադյանն առարկում է Ն. Անդրիկյանին՝ գտնելով, որ միայն լեզվի նմանությունը բավարար չէ Կոստ-

74 Հմտ. Բ—256 (a—275) պարսկերեն ձեռագրի 168 ա թերթը։

75 Տե՛ս Ն. Ակինյան. նշվ. աշխ., էջ 23։

76 Տե՛ս Ն. Անդրիկյան. նշվ. աշխ., էջ 347։

77 Ն. Ակինյան. նշվ. աշխ., էջ 23—24։

իրզնկացուն թարգմանիչ համարելու համար և ավելի ճիշտ է համարում թարգմանությունը վերագրել Առաքել Անեցուն: Ըստ Պ. Մուրադյանի, հայ գրականության մեջ գոյություն ունեն զրուցի երկու թարգմանություններ՝ համառոտ և ընդարձակ խմբագրություններով, որոնցից առաջինը թարգմանված է X դարում, իսկ երկրորդը՝ XIII—XIV դդ. ոչ ուշ⁷⁸:

Մեր կարծիքով, թարգմանության ժամանակը ճշտելու համար շահագանց կարևոր է նախ արարել են ընագրի ստեղծման կամ թարգմանվելու ժամանակը պարզելը, մի խնդիր, որն առայժմ դժվար է լուծել: Իսկ հայերեն թարգմանության ժամանակը ճշտելուց հետո արդեն կարելի կլինի ճշտել և թարգմանչի ինքնությունը:

АРМЯНСКАЯ ВЕРСИЯ «ПОВЕСТИ О ЮНОШЕ И ДЕВУШКЕ» И ЕЕ ИНОЯЗЫЧНЫЕ ПАРАЛЛЕЛИ

(К вопросу об оригинале армянского перевода)

А. Н. МКРТЧЯН

Резюме

«Повесть о юноше и девушке» принадлежит к числу тех переводных памятников, которые пользовались большой популярностью в средневековой Армении. До нас дошло более пяти десятков списков этой повести, датирующихся XIV—XIX вв., а также около полтора десятка ее изданий (XVIII—XX вв.). Изучением повести занимался ряд исследователей (Н. Андрикан, А. Чопанян, Н. Акинян, П. Мурадян, А. Срапян и др.), однако до сих пор существуют нерешенные вопросы, связанные с этим литературным памятником, в том числе и вопрос оригинала армянского перевода. В статье впервые предпринята попытка сравнения армянской версии повести с рядом иноязычных ее версий (арабской, сирийской, арабской в еврейской графике и персидской) с целью выявления оригинала армянского перевода. Для сравнения использованы неопубликованные ранее рукописи повести (арабская, четыре фрагмента еврейско-арабских, персидская). Детальный анализ результатов сравнения всех упомянутых версий обнаруживает большое сходство армянского перевода с арабской версией, а также с арабским вариантом в еврейской графике. Последняя версия, в частности, местами больше приближается к армянскому переводу, чем собственно арабская. Это объясняется существованием арабской редакции повести, послужившей оригиналом как для армянского перевода, так и для арабского варианта в еврейской графике.

Таким образом, подлинником армянского перевода действительно могла послужить арабская версия, а именно, та ее редакция, которая дошла до нас в еврейской графике.

⁷⁸ См. П. Мурадян, Указ. соч., с. 56.